

**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ
Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

ԴԱՏԱՀԱՆՁՄ

Կիրակի 11 Մայիս, կիսորի եռք ժամը 4 գիշեր, ժամանակակից վառական գաղտնաբառաց Վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչացի Վարժարանի պարեկան դաշտահանգներ, ի ներկայութեան ստուարաթիւ ժողովուրդին:

Մարզակեներուն տողանցքն ետք, շարք երկու ժամերու ընթացքին, գործադրուեցաւ մարզական այլազան խաղերէ բաղկացած ճոխ յայտազիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին թէ՝ տղաք եւ թէ աղջկեներ, նախընթաց տարիներու նման բաժնուած երկու մրցորդ իրումբերու:

Դաշտահանդէսը կու գար վկայելու վարժարանէն ներս խմացական աշխատանքներու:

Դուզահնութեան՝ ֆիզիքական դաստիարակութեան ընծայուած լուրջ խամքին, որ կը կատարուէր առաջնորդութեամբ տղող բարձակայ մարզիչ Պր. Միսաք Յակոբեանին և աղջկանց նոր մարզիչ՝ Տէն. Աննա Սիմոնեանին:

Հանդէսի աւարտին, յաջող արդիւնք ձնոք բերած, ինչպէս նաև տարուան ընթացքին կատարուած պատճենութիւն, վօլիպոլի, Փութպօլի եւ փինկ-փօնկի մէջ տուշնութիւն շահած մարզիկներ բաժակներով ու մէտալներով պարզեաւորուեցան Տեսուչ Հողչ. Տ. Կիւրեղ Ս. Վարդապետ Գարիկ եանի կողմէ:

**ԱՄԱՎԵՐՃԻ ՀԱՆԴԻՍ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԲԱԺՆԻՆ**

Տէղի ունեցաւ 8 Յունիս, Կիրակի, կիսորի եռք ժամը 4 գիշեր, Հայ Երիտասարդաց Միտթեան ընդունակ սրահէն մէջ, որ գրեթէ Վը յորդէք ծնողներու եւ ազգայիններու հոծ բազմութեամբ: Կը նախազահէր Տեսուչ Հողչ. Տ. Կիւրեղ Ս. Վարդապետ: Ներկայ էին նաև Հողենորհ Հայրեր:

Շուրջ երկու ժամերու ընթացքին Մանկապարտէզի, ինչպէս նաև Նախակըթարանի Ա. Կարգի երկուս փոքրիկները դուարձացուցին Հանդիսականները իրենց երգերով ու պարերով, կատակերգութիւններով և արտանութիւններով: Հանձիկ պահ

յըն էր, որոր Մանկապարտէզի ուսուցչունի ներուն իննամեայ ժբաջնա ու զոհարերող աշխատանքն արգասիքը կրցած էր մեզի պարզեւել:

Հանդէսի աւարտին, Տեսուչ Հայր սուլթան գուռնակութեամբ արտայայտուեցաւ Մանկապարտէզի ուսուցչունիներուն, եւ յանաւանդ կիս դարու վաստակ ունեցող յանկապարտիկանունի Օր. Տիգրանունի Նալպահտեանի մասին: Հանդիսականները հաճոյքով բաժնուեցան սրահէն, ականաւուն ըլլաէ ետք այս փայլուն արդիւնքին:

**ԱՄԱՎԵՐՃԻ ՀԱՆԴԻՍ
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ**

Տարաթ, 21 Յունիսի երեկոյեան տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի նորակառոյց Տարբարութարա-

նին բացուցը եւ նոյն սրահին մէջ կայացաւ Երկրորդական Վարժարանի Ամավիրիչ Հանդէսոր:

Պատրիարք Ս. Հայրը իր շքախուժով ժամը 6ին ժամանեց Վարդարան, և աջակերտութեան կողմէ երգուած «Ուշ զարդարցին» շարականի երգեցողութեան ընթացքին կորեց Տարբարուծարանի դրան ազուցուած ժապաւէնը:

Ապա, չուրջ երկուքուէկս ժամերու ընթացքին, զործադրուեցաւ երկու ժամերէ բաղկացած ճոփ եւ կոկի յայտագիր մը: Խնչակս ընթացաւարտ դասարանէն Սոլոմոն Թումայիան կը յայտնէր իր բացման խօսքին մէջ, այս տարուան հանդէսին նիթերը կը չօշափէին երեք իրողութիւններ եւ սահմանուած էին ուղեկոյելու երեք դէպքեր, անոնց տարեդարձներուն տպիթով: Անմաւն կոմիտաս Վարդապետի ծննդեան 100-ամեակը, Սարբարապատի ճակատամարտին 50-ամեակը եւ Երեւանի հիմնարկութեան 2750-ամեակը: Ընթացաւարտ դասարանէն օրուան երեք ատենախօսները, Ալբարդ Աւարուեան, Արեգ Գայայեան եւ Եղիա Մարգարեան, յաջորդարար չօշափէին այդ երեք նիթերը, սահուն եւ ժարդու հայերէնող:

Մէջընդէջ եղան մեներդներ, ինչպէս նաև խմբերզներ, մեծ ժամով կոմիտաս Վարդապետի ստեղծադրութիւններէն եւ զեկայարութեամբ ըրջանաւարտ դասարանէն նուպարէթ Հէքիմեանի: Տեղի ունեցաւ նաև խմբական արտասանութիւն, Պարոյր

Սևակի «Անլուկի Զանգակատուն» հոյակապ գործէն: Քաղաքամայր Երեւանի 2750-ամ- և նակին նուիրուած «Երեւան-Երեւունի» երգով վերջ գտաւ հանդէսին առաջին մասը:

Երկրորդ մասը սկսաւ Տեսուչ Հայր Կիւրելի՝ Վարդարանի միամեայ տեղեկադրի ընթերցումով (որ կ'երեւէ «Ծխնօթ» ներկայ թիւին մէջ), ուր մանրամասնօրէն կ'անդրադարձնար զպրոցի կրթական, բարոյական եւ անտեսական կեանքին: Ալզա կատարուեցաւ վլայականաց եւ մրցանակներու բաշխումը: Ընթացաւարտ Մարի Շահնենանի հրաժեշտի ուղերձէն եւ հրաժեշտի խմբերքնին եւոք փակման խօսքը ըրա Պատրիարք Ս. Հայրը, որ գնահատակով արտայարտուեցաւ Տեսուչ Տ. Կիւրել Մ. Վարդապետի մասին, իրեք մղիչ ոյժը զպրոցէն ներս կատարուած նուանումներուն, որոնցմէ վերջինն էր կատուումը օգատուն ու ընդարձակ սրափին՝ որ զպրոցին տարրալուծարանը ըլլալէ զառ, այսուհետեւ պիտի ծառայէ նման հաւաքոյիններու: Յորդորեց շրջանաւարտները որ ըլլան իսէպիմաններ, դատարկու համար անհատներ՝ որոնցմօվ հպարտ դդոր ինքինիք մեր ժողովուրդը ընդհանրապէս եւ Սաղիմահայ զարութն ու Ս. Թ. Վարդարանը մասնաւորաբար: Միաբերան երգուած Տէրունական աղօթքով վերջ գտաւ ապաւորիչ այս հանդէսը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՎԵՐՃԻՆ ԸՆԹԲԵԱՑ ՎԵՐՆԱՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Յունիս 1969, Կիրակի, երեկոյեան ժամ 3-30ին, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, ուսանողութիւնը եւ հաւատացեալներ, գլխաւորութեամբ Հոգէ. Տ. Կիւրել Մ. Վարդիկեանի, պաշտօնական թափորով մէկնեցան Սիոնի Վերջին Ծննդեաց Վերնատունը:

Սրբավայրի երկրորդ յարկի նախկին հաշակերեան եկեղեցին մէջ պաշտօնեցաւ Հոգեգալատեան երեկոյեան ժամերգութիւնը: Ժամերկութիւնը կազմակերպութեան հոգին է:

Կատարեց Հոգեգալատեան տօնին հետ առնչուող խորհրդաժութիւններ, ինչպէս նաև ներկայացաւ օրբտանդին պատօնական ու անդական առեւալները:

Արարողութեան աւարտին, թափօրականը նոյն հանդիսաւորաթեամբ շարունակ կեցին իրենց ուխտազնացութիւնը Սիոնի Վերնատուն առնիթեր՝ Հայապատկան Ս. Փրկչի Վանքը, ուր կատարուեցաւ հոգեկանաւուն պաշտօն Հայ Աղդի համայն նույցեալներու հոգիններուն ի հանդիսաւ: